



Հովհաննես Թումանյան

Բարեկենդանը

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում:

Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում:

Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը՝ մարդուն, ու միշտ կովելիս են լինում:

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն:

Կնիկը բարկանում է .

Ա՛յ, որ ասում, եմ հիմար ես, չես հավատում . Էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել . հորդ քելեխն ես տալի՞ս, թե՞ տղիդ հարսանիքն ես անում:

Ի՛նչ քելեխ, ի՛նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՛նչ ես խոսում, տար պահի, բարեկենդանի, համար է:

Կնիկը հանգստանում է, տանում է պահում:

Անց է կենում միառժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է, բարեկենդանը գալիս չի: Մի օր էլ շենքումը նստած է լինում, տեսնում, է՛ մի մարդ վռագ-վռագ փողոցով անց է կենում: Ջեռը դնում է ճակատին ու ձեն տալի .

Ա՛խպեր, ա՛խպեր, հալա մի կանգնի:

Տղեն կանգնում է:

Ա'խպեր, բարեկենդանը դու հո չե՞ս:

Անցվորականը նկատում է, որ էս կնկա ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեն, տեսնեն ինչ է դուրս գալի:

Հա՛, ես եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ ես ասում:

Էն եմ ասում, որ մենք քո ծառան հո չե՞նք, որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցինք, հերիք չե՞ր . . . չես ամաչո՞ւմ . . . Ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում . . . - Դե էլ ինչ ես նեղանում, քույրիկ ջան, ես էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տանն էի ման գալիս, չե՛ի գտնում:

- Դե արի տար:

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դեսն է անում, երեսը՝ դեպի իրենց գյուղը:

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է .

- Հա՛, էն բարեկենդանն եկավ, իր բաները իրեն սևցրի, տարավ:

- Ի՞նչ բարեկենդան . . . ի՞նչ բաներ . . .

- Ա՛յ էն եղն ու բրինձը Մին էլ տեսնեն՝ վերևից գալիս է . մեր տանն էր ման գալի . կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակ<ը> տվի, տարավ:

- Վա՛յ քու անխելք տունը քանդվի, որ ասում եմ՝ հիմար ես, հիմար ես, էլի . . . Ռ՞ր կողմը գնաց:

- Ա՛յ էն կողմը:

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետևից: Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիավոր քշած գալիս է: Գլխի է ընկնում, որ սա էն կնկա մարդը պետք է լինի:

Գալիս է, հասնում իրեն:

- Բարի օր, ախպերացու:

- Աստծու բարին:

- Հո էս ճամփովը մարդ չի անց կացավ:

- Անց կացավ:

- Ի՞նչ ուներ շալակին:

- Եղ ու բրինձ:

- Հա՛, հենց էդ եմ ասում: Ի՞նչքան ժամանակ կլինի:

- Բավականին ժամանակ կլինի:

- Որ ձին քշեմ, կհասնե՞մ:

- Ո՞րտեղից կհասնես, դու՛ ձիով, նա՛ ոտով: Մինչև քու ձին չորս ոտը կփոխի՝ մի՛ն, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, նա երկու ոտով մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ կգնա, անց կկենա:

- Բա ի՞նչպես անեմ:

- Ի՞նչպես պետք է անես, ուզում ես՝ ձիդ թող ինձ մոտ, դու էլ նրա պես ոտով վազի, գուցե հասնես: - Հա՛, էդ լավ ես ասում:

Վեր է գալիս, ձին թողնում սրա մոտ ու ոտով ճանապարհ ընկնում: Սա հեռանում է թե չէ՝ բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամփեն ծռում, քշում:

Էս մարդը ոտով գնում է, գնում է, տեսնում է՝ չհասավ, ետ է դառնում: Ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չկա: Գալիս է տուն: Նորից սկսում են կովել, մարդը՝ եղ ու բրինձի համար, կնիկը՝ ձիու:

Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կռվում են դեռ: Սա նրան է ասում՝ հիմար, նա՝
սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում: